№ 150 Օգոստոսի 14 (26) 1881 Օգոստոսի 14 (26) № 150

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց օրգան։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Նոր-Բայազէդից· Նամակ խմբագրին· Նամակ խմբագրին· Նամակ խմբագրին· Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Հայոց խնդիր· Ֆրանսիա· Անգլիա· Թիւրքիա· Նամակ Թիւրքիայից· Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ·—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ՀԱՅՈՑ ՕՐԳԱՆ

Թէ Փարիզից, թէ Կ. Պօլսից, թէ Վիէննայից մեր բոլոր թղթակիցները վկայում են որ Վիէննայում հրատարակվող „Journal d'Orient" ֆրանսիական լրագրի Հայոց օրգան դառնալը մեծ նշանակութիւն կունենայ Հայոց խնդրի վճռվելու համար։

Ռուսաստանի Հայերից ենք սպասում, որ նրանք իրանց նիւթական միջոցներով նպաստեն այդ լրագրի գործունէութեանը։ Արդէն, ինչպէս մեզ հաղորդում են, յիշեալ լրագիրը նուիրել է այս օրերս յօդուածների մի շարք Հայոց խնդրին։ Նշանաւորն այն է, որ լրագրի ուղղութիւնը բարեկամ է և Հայերին և ռուսաց կառավարութեանը։ „Մասիս" լրագիրն էլ յիշում է իր համարների մէջ Վիէննայի լրագրի Հայերին խիստ նպաստող յօդուածների մասին։

Մեզ ուղարկվեցան այդ լրագրի այն համարները, որոնց մէջ հրատարակված էին Հայոց խնդրի վրա յօդուածներ, բայց ցաւում ենք որ մինչև այժմ այդ համարները մեր ձեռքը չը հասան։ Անկարելի է կարծել, ի հարկէ, որ „Journal d'Orient" լրագրի համարներին Ռուսաստանի մէջ մուտքը արգելված լինի, քանի որ այդ լրագիրը խիստ բարեկամական կերպով է վերաբերվում դէպի Ռուսաստանը։ Երևի համարները այս կամ այն քաղաքի փօստատան մէջ ընկած մնացել են և մենք մեր համարների չը ստանալը վերաբերում ենք աւելի փօստի անհոգութեանը, քան թէ մի որ և է այլ պատճառի։

Ինչ և իցէ. լրագիրը գոյութիւն ունի, նա գործում է յօգուտ Հայոց խնդրի լուծման, խմբագիրը ամենքին և նոյնպէս Ներսէս սրբազանին նամակով յայտնել է իր համակրութիւնը դէպի Հայոց ազգը և իր պատրաստականութիւնը նպաստել Հայոց խնդրի վճռվելուն։

Բայց մենք, ռուսա-Հայերս, կը ստանանք թէ չենք ստանայ այդ լրագրի համարները,—փոյթ չէ, միայն թէ հաստատ իմանայինք որ մեր նիւթական օժանդակութեամբ նպաստած ենք Եւրօպայում մի Հայոց քաղաքական օրգանի գոյութեանը, որ տարածվում է բոլոր դիպլօմատիական շրջաններում։ Պ. Վ. Արծրունու Փարիզից մեզ գրած նամակից մենք եզրափակում ենք որ „Journal d'Orient" լրագրի խմբագիրը, երբ իր թերթի մէջ հրատարակում է մի յօդուած Հայերի մասին, նա աշխատում է յօդուածը բովանդակող համարը աւելի մեծ քանակութեամբ ամեն նշանաւոր անձանց և բարձր դիպլօմատիական շրջաններին ուղարկելու։

Այդ պատճառով, մեզ Հայերիս համար, գլխաւորն այն չէ որ մենք անպատճառ մեր աչքերով կարդանք այդ տեսակ յօդուածներ, բայց հաստատապէս իմանանք, որ Հայոց դատը պաշտպանող կշիռ ունեցող մի թերթ կայ Եւրօպայում և ամեն միջոցներով ջանանք նրա գոյութեանը նպաստելու։

Այդ պատճառով մենք դիտաւորութիւն ունենք, բացի հաւաքվող բաժանորդագրութիւններից, մեր ձեռքում եղած դրամի մի մասը, որ ժողոված էր յօգուտ Թիւրքաց Հայաստանի, ուղարկել Վիէննայի ֆրանսիական լրագրին, նրա գոյութեանը, որպէս Հայոց օրգանին, նպաստելու նպատակով։ Հրաւիրում ենք և ցանկացողներին մեզ օգնել այդ գործում իրանց կամաւոր նուիրատւութիւններով։

Այն փողերը, որոնք կը հաւաքվեն այդ գործին, մենք ուղղակի կը հասցնենք Ներսէս սրբազանի անձնական տնօրինութեանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԴԻՑ

Օգոստոսի 3-ին

Նոր-Բայազէդ գաւառական քաղաքը, որ գտնվում է Գեղամայ ծովակի եզերքին, բարոյապէս և մտաւորապէս ստոր է և շատ յետ է մնացել ոչ թէ միայն միւս հայաբնակ գաւառական քաղաքներից, այլ և շատ գիւղեր, դպրոցական կեանքով, բարոյապէս և մտաւորապէս շատ աւելի բարձր են Նոր-Բայազէդից։

Խաւար, տգիտութիւն մտաւոր և ազգային անշարժութիւն, անտարբերութիւն, ահա Նոր-Բայազէդցիների յատկանիշները։

Հոգևոր երկսեռ դպրոցները կատարեալ անբարեկարգ, ուսուցիչները գլխովին տգէտ և անարժան իրենց կոչմանը, վարժուհին նոյնպէս անարժան է իր պաշտօնին։ Սա իր անպարկեշտ կենցաղավարութեամբ նորերումս առիթ տուեց հրացանաձգութեան, մեծ աղմուկի ժողովրդեան մէջ, և դատաստանական քննութեան։ Քահանաները նմանապէս տգէտ, անարժան իրանց վսեմ կոչմանը. սրանք կմկմալով են կարդում ս. Գիրքը, իմաստը ամենևին չեն ըմբռնում և շատերը ազգանունները ուղիղ ստորագրել անգամ չը գիտեն։ Երբ ապաշխարութեան օրերը մօտենում են, մեծ պահքը հասնում է (մեզանում քարոզութիւնները լինում են առհասարակ մեծ պահին) նրանք փոխանակ քարոզներ ասելու, Զաքարիայի նման պապանձում են, լեզուները փորերն են ընկնում, իսկ ալկոգոլի գոլորշիներից (այստեղ մեծ մասամբ արաղ են կոնծում) օրհնածները բըրլու են կարդում, էլ չեն լռում։

Ժողովրդեան առաջնորդների կատարեալ բացակայութիւն է տիրում, բայց պէտք է ասել, որ հայ ժողովուրդը լաւ գործունեայ և անշահասէր առաջնորդների, գործողների առաջնորդութեամբ ընդունակ է շատ բան անել, մեծամեծ գործել։ Այդ քաղաքում դուք չէք պատահի մի փոքր ի շատէ զարգացած, հասկացող երիտասարդի։ Նոր սերունդ ասած բանը այստեղ չը կայ, բացի, մոռացայ վերևը ասել, մի երկու երիտասարդներից, որոնք Երևանի պրօգիմնազիայում հազիւ թէ ուսման հոտ առել են՝ կաթնով լիք բերաններով, անաստուածութիւն են քարոզում։

Ահա մի տխուր պատկեր Նոր-Բայազէդի կեանքից։ Երկսեռ դպրոցը, այդ միակ հաստատութիւնը, որ պիտի դաստիարակէ նոր սերունդը, բարձրացնէ ժողովրդի բարոյական ու մտաւոր զարգացման մակերևոյթը, քահանաներ պատրաստէ գաւառի համար, տգիտութիւնը հալածէ, տիրապետող նախապաշարմունքները արմատախիլ անէ, այսօր չէ համապատասխանում իր կոչմանը, ընկել է, կատարեալ անբարեկարգ է, ամենաողորմալի դրութեան մէջ է. այն ինչ դա կարող էր մեր բարեկարգ դպրոցների կարգը մտնել, որովհետև ամենագլխաւոր պայմանը, նիւթական դրութիւնը, որից գլխաւորապէս կախված է դպրոցների բարեկարգութիւնը, ապահոված է։

Ժողովուրդը սիրում է ուսում, կրթութիւն, համակրում է ուսումնարանին, ուղարկում է իր զաւակներին ուսումնարան, տալիս է իր կարողութեան չափով դրամական օժանդակութիւն, բայց ցաւով պէտք է ասել, որ նրա յոյսերը չեն արդարանում, որդիքը տարիների ընթացքում ոչընչից ոչինչ, կատարեալ ոչինչ են սովորում, ընդհակառակը բթամտանում են, հոգեպէս սպանվում են և անընդունակ դառնում ուսման՝ շնորհիւ տիրացու, տգէտ ուսուցիչների։

Եւ հէնց այս է լինում պատճառը, որ ժողովուրդը հետզհետէ սառում, անտարբեր է դառնում, դադարում է ուսումնարանին համակրելուց և հետևաբար շատ պարզ է, դադարեցնում է և դրամական օժանդակութիւնը։

Ասացէք խնդրեմ, մի մարդ կարող է տալ ուրիշին այն, որ ինքը չունի, ուսուցանել, երբ ինքը չէ ուսել, առաջնորդել, երբ ինքն է կարօտ առաջնորդութեան։ «Որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ», օրհնեալ է փայտն, որով լինի արդարութիւն» ահա Նոր-Բայազէդի մանկավարժների սկզբունքները, որ անդադար կըրկնելով աշակերտներին և նրանց ոտ ու գլուխը ջարդելով ջանում են կրթել նոր սերունդը։

Ահա այսպիսի անձինք են Նոր-Բայազէդի ինքնակոչ ուսուցիչները. մէկը վանեցի մի արգէտ տիրացու, իսկ միւսը գաւառական ուսումնարանում սովորած մի գրագիր, որը պաշտօնից արձակվելուց և շատ անգործ թափառելուց յետոյ ստանձնում է ուսուցչի պաշտօն։

Միակ մխիթարական բանը այն է, որ դպրոցների արդի հոգաբարձութեան, մանաւանդ նրա մի անդամի, պ. Մ. Աֆրիկեանցի անձնուէր, եռանդուն և անշահասէր ջանքերով ուսումնարանի տնտեսական դրութիւնը բարւոքվել, աղբիւրները կրկնապատկվել են։ Շնորհակալութիւն և պատիւ հոգաբարձութեան, մանաւանդ նրա անդամ պ. Աֆրիկեանցին։

Բայց հոգաբարձութիւնը որքան խնամք է տանում և հոգում տնտեսական մասի վրա, այնքան անխնամ ու անփոյթ է արել ուսումնարանի ուսումնական մասը, բաւականանալով ուսումնական մասը յանձնելով մի տիրացուի և մի գրագրի, որոնք ոչ միայն անկարող են մի զգալի արդիւնք արտադրել, այլ և մեծ վնաս, բարոյական հարուած են տալիս ուսումնարանին և նրա գոյութեան անգամ վտանգ սպառնում։ Այն ինչ հոգաբարձութեան գլխաւոր նպատակը պիտի լինի ուսումնարանի ուսումնական մասի բարեկարգութիւնը, իսկ տնտեսականը միայն միջոց գլխաւոր նպատակին հասնելու, ուսումնական մասը բարեկարգելու, իսկ ուսումնական մասը կարելի է բարեկարգել միմիայն հմուտ և օրինաւոր ուսուցիչներով։

Ի նկատի ունենալով դպրոցների նիւթական ապահով դրութիւնը (եթէ չեմ սխալվում տարեկան 2,300 ր., արդիւնք ունի), որի համար պէտք է շնորհակալ լինել արդի հոգաբարձութեանը, ես, որպէս բարեկամ, վստահանում եմ մի բարեկամական խորհուրդ տալ մեծ. հոգաբարձութեանը և քաջայոյս եմ, որ հոգաբարձութիւնը կը լսէ իմ խորհուրդը, լաւ ըմբռնելով և համոզվելով այն ճշմարտութեան մէջ, որ չէ կարող ուսուցանել նա, ով ինքն չէ ուսել, որ մարդ չէ կարող տալ ուրիշին այն բանը, որ ինքը չունի։

Ահա իմ խորհուրդը։

Որովհետև մինչև ուսումնական տարւայ ըսկիզբը, մինչև սեպտ. դեռ բաւական ժամանակ է մնում, թող հոգաբարձութիւնը չտայէ հրաւիրել հմուտ, օրինաւոր և փորձառու ուսուցիչներ և մի ընդունակ ու բարոյական վարժուհի գոհացուցիչ վարձատրութեամբ, որովհետև լաւ միսը ծուէնի չի ունենայ, 25—30 ռուբլով միայն տիրացուներն ու գրագիրները կը համաձայնեն ուսուցանել, որոնցից մի այդքան դեռ պէտք է առնել նրանց ուսուցանելու համար և ոչ թէ տալ։ Սպասենք և յուսանք։

* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, օգոստոսի 12

«Մշակ» լրագրի մէջ կարդալով, որ վարձով է տրվում մի խանութ Թիֆլիսի ծածկված Բազազխանում, որ պատկանում է Էջմիածնին, աճուրդի ժամանակ Թիֆլիսի վաճառականներս գնացինք կապալով վերցնելու յիշեալ խանութը։ Աճուրդին ներկայ էր և ամենքին ծանօթ պատուարժան Մամբրէ վարդապետը։ Աճուրդի ժամանակ գինը հասաւ մինչև 400 ռուբլու։ Կոնսիստորիայի մէջ ծառայող մի պարոն իսկոյն վերկացաւ և խառնվեց մեր մէջ որպէս մի վաճառական. ի հարկէ նրա միտքն այն էր, որ մի քանի ռուբլի ստանայ. բայց մենք իմանալով պարոնի դիտաւորութիւնը, որ աճուրդի ժամանակ եկել էր, ուստի թողինք փոքր ինչ մտածելու։ Նոյն ժամանակ վաճառականներից մէկը գնաց պարոնի մօտ ու փորձելով նրան, մի գումար խոստացաւ, որպէս զի չը մասնակցի աճուրդին։ Բայց պարոնը կարծելով, թէ ուղիղ տալու են խոստացած գումարը, պատասխանում է. «այդ քիչ է, չեմ ընդունի, ինչ լայեղ կանեմ այդ փոքրիկ գումարը»։ Պարոնը մտադիր էր մինչև 100 ր. ուզելու։ Սրանից յետոյ վաճառականներից մէկը առաջ եկաւ և ասաց, թէ մենք մինչև 700 ր. կը վճարենք, և եթէ յիշեալ պարոնը կարող է այդքան վճարել, թող վերցնի։ Վերջապէս շատ խօսելուց յետոյ, մենք հասցրինք մինչև 600 ր. բայց պարոնը 600-ի վրա 150 կ. աւելացրեց, իսկ մենք հրաժարվեցանք աճուրդից։ Այդ ժամանակ Մամբրէ վարդապետը մեր վաճառականներից մէկի ձեռքից բռնեց և ասաց. «Թէ իմ կարգը կը սիրէք 50 կ. աւելացրէք և դուք վերցրէք»։ բայց Մամբրէի խօսքը մնաց անկատար։ Սրանից յետոյ անցաւ 3 ամիս և յիշեալ խանութը մնաց դատարկ։ Կոնսիստորիան 3 ամսվայ վարձից զրկվելուց յետոյ, վերջապէս վարձով տուեց 450 ռուբլով։ Մի անգամ անցնելով Սիօնի փողոցով գեր. Մամբրէն, վաճառականներից մէկը ասաց նրան. «Հայր սուրբ, մեր 600 ր. ղալպ էր (կեղծ), իսկ 450 ր. ոչ»։ Բայց վարդապետը պատասխանեց. «քեզ ինչ. մուլքը իմն է, ուզեցի և տուի»։

Ահա մեր գեր. Մամբրէն այդպիսի գործերով է պարապած և իրաւ շատ հմուտ է իր գրպանը հաստատելու։ Եւ զարմանալ գտնվում են մարդիկ, որոնք գովում են նրա նմաններին։ Այդպիսիները, ի հարկէ, ունեն իրանց շահը, առանց այդ չի լինի։ Նրա խօսքերից ինչպէս երևում է Էջմիածնի մուլքը իրն է, գուցէ և շուտով հաստատել տայ իր վրա։ Իսկ Մանկունին ի հարկէ իր մասն ունի, ահա դա է մեր հոգևոր կառավարութիւնը։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաշնորաշէն, 1 օգոստոսի

Ձեր պատուական լրագրի 133 համարի մէջ կարդացինք Հին-Նախիջևանից գրած մի նամակ առանց ստորագրութեան, որի մէջ նամակագիրը հաղորդում է Մաքուի և Սուստ գիւղից փախած քուրդերի Շարուր-Դարալակեազու գաւառում